«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ
ՀՀ, 0033 ք. Երևան, Հ. Հակոբյան փող. 3,
հիմնական մասնաշենքի 2-րդ սեկցիա, 5-րդ հարկ

"Center for Rights Development" NGO
RA, 0033 Yerevan, 3 H. Hakobyan street,
main building, 2nd section, 5th floor

ՀՀ Լոռու մարզպետ
Անդրեյ Ղուկասյանին
«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ
նախագահ Վիոլետտա Զոփունյանից

15.11.2019թ.

Հարցում

Հարգելի պարոն Ղուկասյան,

«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Մարդու իրավունքները բժշկական օգնություն ու սպասարկում ստանալիս» ծրագրի շրջանակներում իրականացնում է ՀՀ-ում առողջապահական ծառայությունների մատչելիության ուսումնասիրություն, որի շրջանակներում անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվություն:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածները և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ՝

1. Ինչպիսի՞ առողջապահական կենտրոններ կան Լոռու մարզում՝ պետական և ոչ պետական (բուժկետ, բուժամբուլատորիա, պոլիկլինիկա, հիվանդանոց, ախտորոշման կենտրոն, լաբորատորիա, առողջության կենտրոն և այլն): Խնդրում ենք նշել առողջապահական կենտրոններն ըստ համայնքների ու բնակավայրերի:
2. Որքա՞ն աշխատակից ունի յուրաքանչյուր կենտրոնը. խնդրում ենք նշել նաև ինչ մասնագետներ են (ընտանեկան բժիշկ, թերապևտ, գինեկոլոգ և այլ)՝ առանց անձի նույնականացման տվյալները նշելու:
3. Ինչպիսի՞ ծառայություններ է մատուցում յուրաքանչյուր առողջապահական կենտրոնը: Ո՞ր ծառայություններն են տրամադրվում անվճար, համավճարի կամ վճարովի եղանակով:
4. Ո՞ր համայնքներին ու բնակավայրերին է սպասարկում յուրաքանչյուր առողջապահական կենտրոնը և տարեկան որքա՞ն բնակչի է սպասարկում:

Հարկ եղած դեպքում պատրաստ ենք քննարկել անհրաժեշտ տեղեկատվության հետ կապված բոլոր հարցերը:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +37494829201, Լիլիթ Ալեքսանյան (Ծրագրի համակարգող):

Պատասխան նամակը խնդրում ենք ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ alek.lilit@gmail.com

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում:

Կազմակերպության նախագահ՝ Վ. Զոփունյան

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» "CENTER FOR RIGHTS DEVELOPMENT" 00885303